



**«Կառավարության ֆինանսների կառավարման
տեղեկատվական համակարգի» ներդրման ծրագրի
ՓՈԻԼ 2.2-ի Հաշվետվություն**

**ԿՖԿՏՀ ներդրման մոդել
ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆ**

Բովանդակություն

Հապավումներ	3
Փաստաթղթեր	3
Ներածություն	4
Գլուխ 1: Առկա գործընթացների ամփոփում	4
Գլուխ 2: ԿՖԿՏՀ մոդելի «Գանձապետարան» մոդուլի կառուցվածք	7
Գլուխ 3: «Գանձապետարան» մոդուլի ֆունկցիոնալ նկարագրություն	13
3.1. ԲԳԿ/ԲՄԿ ծախսային հաշիվների բացում և սահմանաչափերի կիրառում	13
3.2 Եկամտային հաշիվների բացում	15
3.3 Պետական բյուջեի ծախսային ծրագրերի գծով ֆինանսավորումներ	17
3.4 ԲՄԿ-ների կողմից վճարումների կատարում	25
3.5 Հարկերի, տուրքերի և այլ վճարների վերադարձ	27
3.6 Էլեկտրոնային վճարումների հավաքագրում (e-payments)	32
3.7 ՀԴՄ/Տերմինալ սարքերի միջոցով վճարումների հավաքագրում	33
3.8 ԵԱՏՄ անդամ պետությունների միջև մաքսատուրքերի և հակազնագցման տուրքերի բաշխում	35
3.9 Գործառնական օրվա բացում և փակում	36
3.10 Ծախսերի և եկամուտների վերաձևակերպումներ	37
3.11 Ֆինանսական հոսքերի կառավարում	39
3.12 Բանկային քարտերով և կանխիկ եղանակով ծախսերի իրականացում	40
3.13 ԴԱՀԿ որոշումների հիման վրա գանձապետական հաշիվների արգելադրում և գումարների բռնագանձում	42

Հապավումներ

ԿՖԿՏՀ	Կառավարության ֆինանսների կառավարման տեղեկատվական համակարգ
ՖՆ	Ֆինանսների նախարարություն
ԲԳԿ	Բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչ
ԲՍԿ	Բյուջետային հատկացումների ստորադաս կարգադրիչ
ԲԳԿՎ	Բյուջետային գործընթացի կազմակերպման վարչություն
ԳՎ	Գործառնական վարչություն
ԳՄԱ	Գնումների միասնական անվանացանկ (CPV)
ՀՀՀՀ	Հանրային հատվածի հաշվապահական հաշվառում
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՊԿ	Պետական կազմակերպություններ
ՊԵԿ	Պետական եկամուտների կոմիտե
ԿԲ	Կենտրոնական բանկ
ԴԱՀԿ	Դատական ատերի հարկադիր կատարումն ապահովող ծառայություն

Փաստաթղթեր

1. ԿՖԿՏՀ ներդրման մոդել
2. ԿՖԿՏՀ ներդրման մոդել. Բյուջետավորման մոդուլ
3. ԿՖԿՏՀ ներդրման մոդել . Գանձապետական մոդուլ
4. ԿՖԿՏՀ ներդրման մոդել . Գնումների մոդուլ
5. ԿՖԿՏՀ ներդրման մոդել. Պետական պարտքի և բյուջեի նկատմամբ պարտավորությունների կառավարման մոդուլ
6. ԿՖԿՏՀ ներդրման մոդել. Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման մոդուլ
7. ԿՖԿՏՀ ներդրման մոդել. Ներքին աուդիտի մոդուլ

Ներածություն

Սույն փաստաթղթում ներկայացված է ԿՖԿՏՀ շրջանակներում Գանձապետարան մոդուլի կառուցվածքային և ֆունկցիոնալ նկարագրությունը, ինչպես նաև մոդուլի փոխգործակցությունը ԿՖԿՏՀ այլ մոդուլների և արտաքին աղբյուրների հետ:

Առաջարկվող մոդելի մշակման ընթացքում հաշվի են առնվել պատասխանատու ստորաբաժանումների կողմից ներկայացված առաջարկությունները և դիտողությունները:

Փաստաթուղթը բաղկացած է 3 գլուխներից՝

Գլուխ 1 - Առկա գործընթացների ամփոփում և եզրակացություն:

Գլուխ 2 – Գանձապետարան մոդուլի կառուցվածքային նկարագրությունը՝ ներառյալ այլ մոդուլների հետ փոխգործակցությունը, կապը, փոխանակվող տվյալների հոսքերը:

Գլուխ 3 - Գանձապետարան մոդուլի ֆունկցիոնալ նկարագրությունը:

Գլուխ 1: Առկա գործընթացների ամփոփում

«ԿՖԿՏՀ» ներդրման ծառայությունների մատուցման պայմանագրի Փուլ 2-ի ենթափուլ 1-ի շրջանակներում Գանձապետարանի մոդուլի համատեքստում գույքագրվել, ուսումնասիրվել և վերլուծվել են ՖՆ հետևյալ ստորաբաժանումների բիզնես գործընթացները՝

- Գործառնական վարչություն (պետական բյուջեի հաշվառման բաժին, համայնքների և պետական հիմնարկների բյուջեների հաշվառման բաժին)
- Ծախսերի ֆինանսավորման վարչություն
- Բյուջեների կատարման հաշվետվությունների վարչություն
- Պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունների կառավարման վարչություն:

Ուսումնասիրությունների ընթացքում վերհանվել են բիզնես գործընթացների շրջանակներում էլեկտրոնային, ավտոմատ և ոչ էլեկտրոնային եղանակով իրականացվող գործողությունները, ինչպես նաև կատարվել է ավտոմատացման, օպտիմալացման նպատակով վերջիններիս վերլուծությունը:

Պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունների կառավարման վարչության բոլոր գործառնություններն իրականացվում են ոչ էլեկտրոնային և ոչ ավտոմատ եղանակով՝ տվյալները վարվում են .xls ձևաչափով ֆայլերի միջոցով և այլ ստորաբաժանումների սրամադրվում են տեղեկանքների տեսքով Mulberry փաստաթղթաշարժի համակարգի միջոցով: ԿՖԿՏՀ ներդրման շրջանակներում վարչության բոլոր գործընթացները ենթակա են թվայնացման և ավտոմատացման: ԿՖԿՏՀ ներդրման շրջանակներում այդ գործընթացների ավտոմատացումը նախատեսվում է իրականացնել «Պետական պարտքի

և պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունների» մոդուլում (տե՛ս նկարագրությունը «ԿՖԿՏՀ ներդրման մոդել. պետական պարտքի և բյուջեի նկատմամբ պարտավորությունների կառավարման մոդուլ»):

Ծախսերի ֆինանսավորման վարչության գործառույթների որոշ մաս իրականացվում է LS Finance համակարգի կիրառմամբ, սակայն առկա են գործընթացներ, որոնք իրականացվում են ոչ էլեկտրոնային եղանակով և ենթակա են թվայնացման և բարելավման Գանձապետարան մոդուլի շրջանակներում: Օպտիմալացման և բարելավման առաջարկությունները ներկայացված են սույն փաստաթղթի երրորդ գլխում:

Բյուջեների կատարման հաշվետվությունների վարչությունը պետական բյուջեի կատարման հաշվետվությունների հավաքագրման, ստուգման և ամփոփման համար կիրառում է LS Finance և LS Finance Rep տեղեկատվական համակարգերը: Հաշվետվությունները ԲԳԿ և ԲՄԿ հանդիսացող մարմիններից հիմնականում հավաքագրվում են համակարգի միջոցով, մասնավոր դեպքերում անհրաժեշտ տվյալները ստացվում են Mulberry համակարգով: Ընդ որում, տվյալների որոշ խումբ մուտքագրվում են ձեռքով և առկա չէ դրանց արժանահավաստությունը ստուգելու հնարավորություն հաշվապահական հաշվառման տվյալների մասով: ԿՖԿՏՀ ներդրման շրջանակներում նախատեսվում է, որ պետական բյուջեի կատարման հաշվետվությունների ձևավորման համար անհրաժեշտ տվյալները պետք է վարվեն ՀՀՀՀ մոդուլում՝ կենտրոնացված միասնական էլեկտրոնային համակարգի կիրառմամբ (տե՛ս մանրամասները «ԿՖԿՏՀ ներդրման մոդել. հանրային հատվածի հաշվապահական հաշվառման մոդուլ» փաստաթղթում), իսկ հաշվետվությունները ձևավորվեն անալիտիկ-հաշվետվողական մոդուլում (տե՛ս մանրամասները «ԿՖԿՏՀ ներդրման մոդել» փաստաթղթում):

Գործառնական վարչության գործընթացների ուսումնասիրությունը ցույց տվեց թվայնացման և ավտոմատացման բարձր մակարդակ: Գանձապետական համակարգում ներառված բոլոր մարմինների բյուջեների կատարման գործընթացը կազմակերպվում է կենտրոնացված կարգով՝ LS Finance/Client Treasury համակարգի միջոցով, որտեղ ներդրված է նախնական վերահսկողության պատշաճ համակարգ:

LS Finance/Client Treasury համակարգը ինտեգրված է ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային շտեմանարի և ՊԵԿ-ի տեղեկատվական համակարգի հետ և մի շարք գործընթացների իրականացման ընթացքում կատարում է անհրաժեշտ տվյալների հսկում/ստուգում:

LS Finance/Client Treasury համակարգի կիրառմամբ իրականացվող մի շարք գործընթացներ առաջարկվում է տեղափոխել ԿՖԿՏՀ այլ մոդուլների տիրույթ՝ հիմք ընդունելով մեկ աղբյուրից տվյալների ստեղծման, փոփոխման և կառավարման սկզբունքը:

Այդպիսի գործընթացների ցանկը տրվում է ստորև և դրանց օպտիմալացման վերաբերյալ առաջարկությունները ներկայացված են Հաշվետվության տվյալ մոդուլին նվիրված գլխում:

Գործընթաց	ԿՖԿՏՀ մոդուլ
-----------	--------------

Նախահաշիվների և վճարման ժամանակացույցերի ներմուծում	Բյուջետավորման մոդուլ, բյուջեի կազմման ենթամոդուլ
Գնումների անվանացանկի ներկայացում (ՄԻԳ)	Բյուջետավորման մոդուլ, բյուջեի կազմման ենթամոդուլ
Պայմանագրերի, պայմանագրերի քաղվածքների հաշվառում	ՀՀՀՀ մոդուլ, պայմանագրեր ենթամոդուլ
Պարտավորությունների, ֆինանսավորման հայտի, հավաստագրերի ձևավորում	ՀՀՀՀ մոդուլ, դրամական հոսքերի կառավարում ենթամոդուլ
Ուղղակի վճարումների ձևակերպում	ՀՀՀՀ մոդուլ, դրամական հոսքերի կառավարում ենթամոդուլ
Ծախսերի սահմանաչափերի հատկացում	Բյուջետավորման մոդուլ, բյուջեի կազմման ենթամոդուլ
Բյուջեի թերակատարումների վերաբերյալ հաշվետվություններ	Անալիտիկ-հաշվետվողական մոդուլ
Տեղեկանքների, հաշվետվությունների կազմում	Անալիտիկ-հաշվետվողական մոդուլ
Օգտվողներին լիազորությունների տրամադրում	Օգտվողների կառավարման մոդուլ

Եզրակացություն

Այսպիսով, ԿՖԿՏՀ շրջանակներում ներդրվող Գանձապետարան մոդուլի գործառնությունները կսահմանափակվեն հետևյալով՝


- Գանձապետական հաշիվների բացում և կառավարում
- Բյուջետային դասակարգմանը համապատասխան եկամուտների հաշվառում
- Բյուջետային դասակարգմանը համապատասխան ծախսերի հաշվառում՝ նախնական հսկողությամբ ծախսերի ֆինանսավորում և վճարումների կատարում
- Հարկերի, տուրքերի և օրենսդրությամբ նախատեսված այլ գումարների վերադարձի ապահովում
- Պետական ընդհանուր ռեսուրսների կառավարում

Գլուխ 2: ԿՖԿՏՀ մոդելի «Գանձապետարան» մոդուլի կառուցվածք

«Գանձապետարան» մոդուլի ներդրումը պետք է իրականացվի հետևյալ սկզբունքներով.


- Հնարավորինս թույլ կախվածություն ԿՖԿՏՀ մյուս մոդուլներից և արտաքին համակարգերից:
- ԿՖԿՏՀ մյուս մոդուլներում կամ արտաքին համակարգերում մշակվող տվյալների վերակիրառություն:
- Հնարավորինս պարզ և բավարար ֆունկցիոնալություն՝ մեկ մոդուլի տիրույթում աշխատելու համար:

«Գանձապետարան» մոդուլի առաջարկվող կոնցեպտի կոմպոնենտային դիագրամը բերված է նկար 2.1-ում:



Նկար 2.1 Առաջարկվող «Գանձապետարան» մոդուլի կոնցեպտի կառուցվածքային սխեմա

Նկար 2.2-ում ներկայացված է «Գանձապետարան» մոդուլի կոնցեպտի շրջանակներում տվյալների հոսքը ԿՖԿՏՀ մյուս մոդուլների և արտաքին համակարգերի միջև:



Նկար 2.2 Առաջարկվող «Գանձապետարան» մոդուլի կոնցեպտի տվյալների հոսք

Հաջորդիվ ներկայացվում է առանձին փոխգործակցող մոդուլների և արտաքին աղբյուրների, դրանցում դերակատարում ունեցող բաղադրիչների նշանակությունը, ինչպես նաև տվյալները, որոնք փոխանակվում են վերջիններիս միջև:

2.1 Անալիտիկ-հաշվետվողական մոդուլ

ԿՖԿՏՀ-ում նախատեսվում է ներդնել Անալիտիկ-հաշվետվողական մոդուլ, որն կօգտագործվի ԿՖԿՏՀ բոլոր մոդուլների կողմից՝ անալիտիկ-հաշվետվողական գործառույթները մեկ տիրույթում իրականացնելու համար: Մանրամասները բերված են համապատասխան փաստաթղթում («ԿՖԿՏՀ ներդրման մոդել»):

Անալիտիկ-հաշվետվողական մոդուլը նախատեսվում է կիրառել նաև «Գանձապետարան» մոդուլում՝ բոլոր տեսակի անալիտիկ և հաշվետվողական տվյալների պահպանման և դրանց հիման վրա հաշվետվությունների ձևավորման համար:

2.2 Գանձապետարան մոդուլ

Գանձապետարանի մոդուլը նախատեսված է բյուջատային դասակարգմանը համապատասխան պետական բյուջեի եկամուտների հաշվառման, նախնական հսկողությամբ ծախսերի ֆինանսավորման և հաշվառման, պետական գանձապետական և արտաբյուջետային հաշիվների վարման և պետական ընդհանուր ռեսուրսների հետ գործառնությունների իրականացման համար:

2.3 Բյուջետավորման մոդուլ

Բյուջետավորման մոդուլը նախատեսված է պետական մարմինների կողմից բյուջետային հայտերի կազմման, ինչպես նաև եկամուտների կանխատեսման, բյուջեի հավասարակշռման և համայնքների հաստատված բյուջեների ստացման գործընթացները իրականացնելու

համար: Բյուջետավորման մոդուլը տրամադրում է Գանձապետարանին հաստատված/ճշտված բյուջեի պլանի, սահմանաչափերի, վճարումների ժամանակացույցի վերաբերյալ տվյալներ, ինչպես նաև ստանում է տվյալներ հաշիվների մնացորդների և բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ:

2.4 Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման (ՀՀՀՀ) մոդուլ

ՀՀՀՀ մոդուլը նախատեսված է ՀՀ հանրային հատվածի կազմակերպությունների կենտրոնացված հաշվապահական հաշվառման և կենտրոնացված կարգով պայմանագրերի կառավարման համար: ՀՀՀՀ մոդուլը տրամադրում է Գանձապետարան մոդուլին ֆինանսավորման հատկացման և վճարումների կատարման, ինչպես նաև պայմանագրերի տվյալները՝ նախնական հսկողության իրականացման համար:

2.5 Պետական պարտքի մոդուլ

Պետական պարտքի մոդուլը նախատեսված է պետական պարտքի կառավարման, պետական պարտատոմսերի աճուրդի կազմակերպման, խնայողական պարտատոմսերի էլեկտրոնային վաճառքի, առաջնային և երկրորդային գործակալների ռեեստրի վարման համար: Գանձապետարան մոդուլը ՊՊ մոդուլին տրամադրում է տվյալներ պարտքային գործիքների գանձապետական մուտքերի և ելքերի վերաբերյալ:

2.6 Բյուջեի նկատմամբ պարտավորությունների մոդուլ

Բյուջեի նկատմամբ պարտավորությունների մոդուլը նախատեսված է հասարակ և փոխանցելի մուրհակների, բյուջետային երաշխիքների, բյուջետային վարկերի, ենթավարկերի տրամադրման և կառավարման գործառույթների համար:

Գանձապետարան մոդուլը տրամադրում է մոդուլին տվյալներ պարտավորությունների գործիքների գանձապետական մուտքերի և ելքերի վերաբերյալ:

2.7 Կենտրոնական բանկի համակարգեր

Կենտրոնական բանկը օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով անվճար իրականացնում է կառավարության բանկային սպասարկումը: Կենտրոնական բանկի համակարգերի միջոցով ապահովվում են դրամական ներհոսքերը և արտահոսքերը գանձապետարանի և գանձապետական համակարգից դուրս գործող առևտրային բանկերի միջև:

2.8 ՊԵԿ

ՊԵԿ-ի տեղեկատվական համակարգերի միջոցով Հայաստանի Հանրապետությունում կենտրոնացված կարգով իրականացվում են հարկային հաշվետվությունների ներկայացման, էլեկտրոնային եղանակով հաշվարկային փաստաթղթերի դուրս գրման, հսկիչ-դրամարկղային մեքենայով իրականացված դրամական հաշվարկների գործառույթները: Գանձապետարան մոդուլը ՊԵԿ-ի SS համակարգի հետ համակցման միջոցով ստուգում է ՀԴՄ POS տերմինալների միջոցով հավաքագրված գումարների տվյալները:

2.9 E-payments համակարգ

Պետական վճարումների էլեկտրոնային համակարգը (e-payments.am) հնարավորություն է տալիս Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պետական տուրքի կամ տեղական տուրքի կամ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող ծառայությունների համար գանձվող վճարը կամ վարչական տուգանքները կատարել էլեկտրոնային եղանակով: Գանձապետարան մոդուլը E-payments համակարգի հետ համակցման միջոցով ստանում է համակարգով հավաքագրված գումարների վերաբերյալ տվյալները:

2.10 ԴԱՀԿ

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության որոշումների հիման վրա իրականացվում են հաշիվների վրա արգելանքների կիրառման և գումարների բռնագանձման գործառնությունները: ԿՖԿՏՀ-ի շրջանակներում նախատեսվում է ապահովել համակցում Գանձապետարան մոդուլի և ԴԱՀԿ-ի համակարգի միջև՝ գանձապետական հաշիվների վրա արգելանքների կիրառման և գումարների բռնագանձման գործընթացի ավտոմատացման համար:

2.11 Փոխանակվող տվյալներ

#	Ինտերֆեյս	Տվյալներ	Տրամադրող մոդուլ/ենթամոդուլ	Կիրառող մոդուլ/ենթամոդուլ
1	ԳՁ1	Կայունացման հաշվի մնացորդ, տարեսկզբի ազատ մնացորդ	Գանձապետարան	Բյուջետավորում
2	ԳՁ2	<p><u>Հաշիվների վերաբերյալ տվյալներ</u></p> <ol style="list-style-type: none"> Գանձապետական հաշիվ, հաշվի սահմանաչափ, նախահաշիվ և վճարման ժամանակացույց դրամական միջոցների մուտք, դրամական միջոցների ելք, հաշիվների մնացորդ, մերժված գործարքի տվյալ փոխարժեքներ ԵԱՏՄ մաքսատուրքի և հակազնագցման գծով պարտավորության տվյալներ 	Գանձապետարան	Հանրային Հատվածի Հաշվապահություն


3	ԳՁ3	ՀԴՄ POS տերմինալի միջոցով հավաքագրված գումարներ	Գանձապետարան	ՊԵԿ
4	ԳՁ4	Պարտքային գործիքների գանձապետական մուտքեր/ելքեր	Գանձապետարան	Պետական պարտք
5	ԳՁ5	Բացված գանձապետական հաշվի տվյալներ Էլեկտրոնային վճարումներ ավանդադրման հայտ	Գանձապետարան	ԿԲ
6	ԳՁ6	Պարտավորությունների գործիքների գանձապետական մուտքեր/ելքեր	Գանձապետարան	Բյուջեի նկատմամբ պարտավորություններ
7	ԳՁ7	Անալիտիկ-հաշվետվողական տվյալներ 1. բյուջեի կատարման ընթացքի մասին տեղեկատվություն (եկամուտներ, ծախսեր)	Գանձապետարան	Անալիտիկ հաշվետվողական
8	ԳՁ8	Եկամտային հաշիվ բացելու դիմում	Գանձապետարան/մարմին	Գանձապետարան
9	ԳՁ9	Հաշիվների և արգելադրված /բռնագանձված գումարի վերաբերյալ տվյալներ	Գանձապետարան	ԴԱՀԿ
10	Բ1	Բյուջեի ծախսերի և ելքերի վերաբերյալ տվյալներ	Բյուջետավորում	Գանձապետարան
11	Բ4	Համայնքների հաստատված/ճշտված բյուջե	Բյուջետավորում	Գանձապետարան
12	ԷՎ1	Եկամուտների հավաքագրման տվյալներ ըստ գանձող մարմինների	Պետական վճարումների էլ. համակարգ	Գանձապետարան
13	ԿԲ1	Փոխարժեքներ	Կենտրոնական բանկ	Գանձապետարան

		դրամական հոսքերի վերաբերյալ տվյալներ		
14	ՊԵԿ1	ՀԴՄ գործարքների հաստատում հարկերի, տուրքերի սառեցում	ՊԵԿ-ի համակարգ	Գանձապետարան
15	Հ13	Պայմանագրեր և վճարման ժամանակացույցեր	ՀՀՀՀ մոդուլ	Գանձապետարան
16	ԱՀ4	Անալիտիկ-հաշվետվողական տվյալներ	Անալիտիկ-հաշվետվողական մոդուլ	Գանձապետարան
17	Հ2	<ol style="list-style-type: none"> 1. Հավաստագրերի, պարտավորությունների ամփոփ տվյալներ, ֆինանսավորման հայտ 2. Վճարման հանձնարարականներ 3. Վերաձևակերպման հայտ 	ՀՀՀՀ մոդուլ	Գանձապետարան

Քլուխ 3: «Գանձապետարան» մոդուլի ֆունկցիոնալ նկարագրություն

Սույն գլխում ներկայացված են այն գործընթացները, որոնք ԿՖԿՏՀ մոդելի ներդրման կոնտեքստում իրականացվելու են «Գանձապետարան» մոդուլում:

3.1. ԲԳԿ/ԲՄԿ ծախսային հաշիվների բացում և սահմանաչափերի կիրառում




Նպատակ	ԲԳԿ/ԲՄԿ հաշիվների բացում, հաշիվների վրա սահմանաչափերի կիրառում ըստ հաստատված բյուջեի պլանի, հաստատված բյուջեի պլանի հիման վրա նախահաշիվների և ժամանակացույցերի ձևավորում:
Նկարագրություն/ ընթացք	ԲԳԿ/ԲՄԿ-ների նոր ծախսային հաշիվները կբացվեն ավտոմատ եղանակով «Գանձապետարան» մոդուլում ԲԳԿՎ կողմից Բյուջեատարարման մոդուլում համապատասխան ծրագրի/միջացառման,

	<p>պատասխանատու/կատարողի, հաստատված բյուջեի պլանի ձևավորումից հետո: Սույն մոդելի կիրառման դեպքում չպետք է լինեն երրորդ մակարդակի հաշիվներ:</p> <p>Համակարգը կծանուցի ԳՎ լիազորված աշխատակցին բացված հաշվի վերաբերյալ՝ տվյալ հաշվի համար անհրաժեշտ դասակարգումները (հաշվեկշիռ, տիպ) կատարելու համար, որից հետո հաշիվը կդառնա ակտիվ:</p> <p>Բացված հաշիվը կառավարելու լիազորությունները կտրամադրվեն ԲԳԿ/ԲՄԿ պատասխանատուին Օգտվողների կառավարման մոդուլում, որի միջոցով պատասխանատուն կտրամադրի անհրաժեշտ լիազորությունները տվյալ մարմնի այլ աշխատակիցներին:</p> <p>Նույն եղանակով Բյուջետավորման մոդուլից կստացվեն գործող հաշիվների սահմանաչափերը՝ ըստ հաստատված/ճշտված բյուջեի պլանի, որի հիման վրա ավտոմատ եղանակով կձևավորվեն ԲՄԿ-ների ծախսերի կատարման նախահաշիվները և վճարման ժամանակացույցերը եռամսյակային և/կամ ամսական բաշխվածությամբ: Եթե Բյուջետավորման մոդուլից վճարման ժամանակացույցերը ստացվեն միայն եռամսյակային բաշխվածությամբ, ապա ԲՄԿ-ները եռամսյակային համամասնությունների հաստատումից հետո պետք է Բյուջետավորման մոդուլում մուտքագրեն վճարման ժամանակացույցերը ըստ շաբաթների/ամիսների՝ աճողական կարգով:</p> <p>Հաստատված բյուջեի պլանի ցանկացած փոփոխություն (վերաբաշխում, սահմանի բացում) կհամաժամանակեցվի «Գանձապետարան» մոդուլում պահվող և կիրառվող տվյալների հետ:</p>
<p>Հղում առկա գործընթացին</p>	<p>ԳԶ-ՊԲ1 Հաշիվների բացում՝ ԾԻԳ</p> <p>ԳԶ-ՊԲ3 Ծախսերի կատարման նախահաշիվների ընդունում, ստուգում, հաշվառում</p> <p>ԳԶ-ՀՊ1 Հաշիվների բացում՝ համայնքներ, պետական հիմնարկներ, ԻԱ</p> <p>ԳԶ-ՀՊ2 Ծախսերի կատարման նախահաշիվների և վճարման ժամանակացույցերի ընդունում</p> <p>ԳԶ-ԾՖ4 Բյուջետային հատկացումների և այլ ցուցանիշների վերաբաշխումների ու փոփոխությունների իրականացում</p>
<p>Տիրույթ</p>	<p>ԲԳԿՎ, Գանձապետարան</p>

Դերակատարներ	ԳՎ աշխատակից
Մուտքային տվյալներ	Բ1
Ելքային տվյալներ	ԳՁ 2.1

3.2 Եկամտային հաշիվների բացում




Նպատակ	ՀՀ պետական բյուջեի եկամուտների հավաքագրումը և հաշվառումը
Նկարագրություն/ ընթացք	Եկամտային հաշիվների բացումը կիրականացվի բյուջետային եկամուտների հավաքագրման գործի կազմակերպման համար պատասխանատու ԲԳԿ հանդիսացող մարմնի՝ Համակարգով ներկայացվող էլեկտրոնային դիմումի հիման վրա:

	<p>ԳՎ աշխատակիցը, Համակարգի միջոցով դիմումը ստանալուց և ուսումնասիրելուց հետո անհամապատասխանությունների բացակայության դեպքում կիրականացնի հաշվի բացումը անհրաժեշտ դասակարգումներով՝ ԲԳԿՎ հետ խորհրդակցելով եկամուտների դասակարգման կողմը: Հաշիվը բացելուց հետո անհրաժեշտ տվյալները կուղարկվեն ԿԲ՝ առևտրային բանկերին անհրաժեշտ տեղեկատվությունը տրամադրելու համար: Հաշիվը ակտիվացնելուց հետո ԲԳԿ հանդիսացող մարմնի պատասխանատուն Օգտվողների կառավարման մոդուլի միջոցով կստանա հաշիվը դիտելու, ինչպես նաև մարմնի այլ աշխատակիցներին թույլտվություն տրամադրելու լիազորություն:</p>
Հղում առկա գործընթացին	ԳԶ-ՊԲ9 Եկամտային և ծախսային հաշիվների բացում
Տիրույթ	Գանձապետարան, ԿԲ
Դերակատարներ	ԳՎ աշխատակից, ԲԳԿ աշխատակից
Մուտքային տվյալներ	ԳԶ 8
Ելքային տվյալներ	ԳԶ 5

3.3 Պետական բյուջեի ծախսային ծրագրերի գծով ֆինանսավորումներ


3.3.1. ԲՄԿ-ների պարտավորությունների ամփոփում, ֆինանսավորման հայտերի ավտոմատ ձևավորում և կատարում /ամենօրյա ռեժիմով/



Նպատակ	ԲՄԿ-ների կողմից ստանձնած պարտավորությունների ամփոփում, ֆինանսավորման հայտերի ավտոմատ ձևավորում և ֆինանսավորման հատկացում
Նկարագրություն/ ընթացք	ԲՄԿ-ները ծախսերի ֆինանսավորման նպատակով ՀՀՀՀ մոդուլում կձևավորեն պարտավորություններ, որոնց հաստատման/գրանցման ժամանակ համակարգը կիրականացնի տվյալների ստուգում/հսկում հաստատված (ճշտված) բյուջեի պլանի հետ՝ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման հոդվածների և վճարման ժամանակացույցի: Հաստատված պարտավորությունների հիման վրա

	<p>ՀՀՀՀ մոդուլում յուրաքանչյուր աշխատանքային օրվա ավարտից հետո ինքնաշխատ կձևավորվի ԲԳԿ-ի ֆինանսավորման հայտը:</p> <p>ՀՀՀՀ մոդուլում ձևավորված հավաստագրերի և ֆինանսավորման հայտերի տվյալների հենքի վրա Գանձապետարանի մոդուլը գործառնական օրվա փակումից հետո կձևավորի նախորդ աշխատանքային օրվա վերջի դրությամբ ամփոփված տվյալների բազա, որի հիման վրա ԳՎ աշխատակիցը համակարգում կձևավորի բյուջետային փոխանցագրեր, որոնք բացվածքով կարտացույեն ծախսերը ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման հոդվածների: ԳՎ աշխատակցիը բյուջետային փոխանցագրերը համակարգով կուղարկի հաստատման ԾՖՎ:</p> <p>ԾՖՎ առակություններ չունենալու դեպքում համակարգով կհաստատի փոխանցագիրը, իսկ իր լիազորությունների շրջանակներում ֆինանսավորման պակասեցումներ կատարելու անհրաժեշտության դեպքում համակարգով կուղարկի ԳՎ պակասեցումների տվյալները՝ հիմնավորումներով: ԳՎ, ԾՖՎ վերջնական հաստատումը ստանալուց հետո, կհաստատի ամփոփ բյուջետային փոխանցագրերը:</p> <p>ԳՎ կողմից փոխանցագրի հաստատման ժամանակ համակարգը կրկին կիրականացնի հսկում ըստ տնտեսագիտական և գործառնական դասակարգման հոդվածների և վճարման ժամանակացույցի և հայտնաբերված սխալների դեպքում թույլ չի տա կատարել գործարքը՝ մինչև խնդրահարույց տողերի հեռացումը: Մերժված հոդվածների առկայության դեպքում, ինչպես նաև հատկացված ֆինանսավորման մասով ԲՄԿ-ի լիազորված աշխատակիցը կստանա ծանուցում ՀՀՀՀ մոդուլում:</p>
<p>Հղում առկա գործընթացին</p>	<p>ԳԶ-ՊԲ15 Ամփոփ բյուջետային փոխանցագրերի ձևակերպում</p> <p>ԳԶ-ՊԲ21 ԲԳԿ-ների կողմից ֆինանսավորման հայտերի ներկայացում</p> <p>ԳԶ-ԾՖ1 Պետական բյուջեի ծախսային ծրագրերի ֆինանսավորման կազմակերպում /Ամենօրյա ռեժիմով/</p> <p>ԳԶ-ՊԲ6 - ԾԻԳ-երի կողմից հավաստագրերի ներբեռնում</p> <p>ԳԶ-ԾՖ1- Պետական բյուջեի ծախսային ծրագրերի ֆինանսավորման կազմակերպում՝ Վարկային և դրամաշնորհային ծրագրերի համաֆինանսավորման գործընթաց</p>
<p>Տիրույթ</p>	<p>Գանձապետարան, ՀՀՀՀ</p>
<p>Դերակատարներ</p>	<p>ԳՎ աշխատակից, ԾՖՎ աշխատակից, ԲՄԿ աշխատակից</p>
<p>Մուտքային տվյալներ</p>	<p>Հ 2.1</p>

3.3.2 Հատուկ ծրագրերով ֆինանսավորման հատկացում




Նպատակ

ՀՀ կառավարության մի շարք ծրագրերով նախատեսված միջոցների ֆինանսավորման ստացում

<p>Նկարագրություն/ ընթացք</p>	<p>ՀՀ կառավարության մի շարք ծրագրերով (արտասահմանյան պաշտոնական գործուղումներ ծրագիր, արտասահմանյան պատվիրակությունների ընդունելությունների միջոցառում) նախատեսված միջոցներից ֆինանսավորում ստանալու համար ԲՄԿ-ն Բյուջետավորման մոդուլում կձևավորի սահմանաչափի հատկացման հայտ, որը կուսումնասիրվի ՖՆ լիազորված աշխատակցի կողմից: Անհամապատասխանությունների հայտնաբերման դեպքում հայտը կմերժվի ՖՆ լիազորված աշխատակցի կողմից համապատասխան հիմնավորմամբ, իսկ անհամապատասխանությունների բացակայության դեպքում հայտի կարգավիճակը կփոխվի «ընթացքի մեջ» մինչև լիազոր մարմնի կողմից համապատասխան որոշման կայացումը: Համակարգի կողմից կիրականացվի հսկում, որ «ընթացքի մեջ» գտնվող նախագծերի հանրագումարը չգերազանցի տվյալ ծրագրով նախատեսված միջոցների սահմանաչափը, իսկ գերազանցելու դեպքում ՖՆ լիազորված ստորաբաժնումը կնախաձեռնի բյուջեի վերաբաշխում:</p> <p>ՀՀ կառավարության կամ վարչապետի որոշման ընդունումից հետո ՖՆ լիազորված աշխատակիցը կհաստատի սահմանաչափի տրամադրման հայտը, որից հետո տեղի կունենա տվյալների համաժամանակեցում Գանձապետարանի մոդուլի հետ:</p> <p>ՖՆ լիազորված աշխատակցի կողմից սահմանաչափի տրամադրման հայտի հաստատումից հետո ԲՄԿ-ի լիազորված աշխատակիցը կստանա ծանուցում և ՀՀՀՀ մոդուլում կձևավորի պարտավորություն, ֆինանսավորման հայտը կձևավորվի համակարգի կողմից ինքնաշխատ և կուղարկվի Գանձապետարան կատարման:</p> <p>ՖՆ լիազորված աշխատակիցը համակարգի միջոցով կստանա ծանուցում առկա ֆինանսավորման հայտի վերաբերյալ, որից հետո կձևավորի, կստուգի և կհաստատի բյուջետային փոխանցագիր: Բյուջետային փոխանցագրի հաստատման/գրանցման ժամանակ համակարգը կիրականացնի հսկում ըստ տնտեսագիտական, գործառական դասակարգման հոդվածների և վճարման ժամանակացույցի և հայտնաբերված սխալների դեպքում թույլ չի տա կատարել գործարքը:</p> <p>Մերժված հոդվածների առկայության դեպքում, ինչպես նաև հատկացված ֆինանսավորման մասով ԲՄԿ-ի լիազորված աշխատակիցը կստանա ծանուցում ՀՀՀՀ մոդուլում:</p>
<p>Հղում առկա գործընթացին</p>	<p>ԳԶ-ԾՖ1- Պետական բյուջեի ծախսային ծրագրերի ֆինանսավորման կազմակերպում</p> <p>-Արտասահմանյան պաշտոնական գործուղումներ միջոցառմամբ (1185-11002) ֆինանսավորում</p>

	-Արտասահմանյան պատվիրակությունների ընդունելությունների միջոցառմամբ (1185-11001) ֆինանսավորում -Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի վճիռների և որոշումների հիման վրա ֆինանսական հատուցումների տրամադրում միջոցառման ֆինանսավորում
Տիրույթ	Բյուջետավորման մոդուլ, ՀՀՀՀ մոդուլ, Գանձապետարան մոդուլ
Դերակատարներ	ԲՍԿ աշխատակից, ՖՆ լիազորված աշխատակից
Մուտքային տվյալներ	Բ1, Հ 2.1
Ելքային տվյալներ	ԳՁ 2.2


3.3.3 Դոտացիաների և կորուստների փոխհատուցում



Նպատակ	Պետական բյուջեից համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների և ՀՀ ԱԺ
--------	---

	ընդունած օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների կորուստների փոխհատուցում
Նկարագրություն/ ընթացք	<p>Համայնքներին ըստ հաստատված բյուջեի դոտացիաների և կորուստների փոխհատուցումը իրականացնելու համար Գանձապետարան մոդուլում յուրաքանչյուր ամսվա ավարտին ինքնաշխատ կձևավորվի բյուջետային փոխանցագիր՝ հիմք ընդունելով Բյուջետավորման մոդուլից ստացված հաստատված բյուջեի պլանը և վճարման ժամանակացույցը: Համակարգը ձևավորված բյուջետային փոխանցագիրը կտեղափոխի Համակարգի հսկման հերթ, որտեղ այն ենթակա է ստուգման և հաստատման լիազորված աշխատակցի կողմից:</p> <p>ԾՖՎ-ը առարկություններ չունենալու դեպքում համակարգով կհաստատի փոխանցագիրը, իսկ իր լիազորությունների շրջանակներում ֆինանսավորման պակասեցումներ (այդ թվում՝ չեղարկումներ) կատարելու անհրաժեշտության դեպքում կկատարի բյուջետային փոխանցագրի խմբագրում, որը ենթակա է վավերացման դեկավարի կողմից: Փոխանցագրի հաստատման ժամանակ համակարգը կիրականացնի անհրաժեշտ հսկումները և անհամապատասխանությունների բացակայության դեպքում կկատարի գործարքը, որից հետո գումարը կկրեդիտավորվի համայնքների հաշվին՝ արտացոլվելով ՀՀՀՀ մոդուլում:</p>
Հղում առկա գործընթացին	<p>ԳԶ-ԾՖ1- Պետական բյուջեի ծախսային ծրագրերի ֆինանսավորման կազմակերպում՝</p> <p>-պետական բյուջեից համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների և ՀՀ ԱԺ ընդունած օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների կորուստների փոխհատուցում</p>
Տիրույթ	Գանձապետարան մոդուլ, ՀՀՀՀ մոդուլ
Դերակատարներ	ԾՖՎ աշխատակից
Մուտքային տվյալներ	Բ4
Ելքային տվյալներ	ԳԶ 2.2


3.3.4 Համայնքներին ՀՀ պետական բյուջեից սուբվենցիաների վճարում



Նպատակ	Համայնքներին ՀՀ պետական բյուջեից տրամադրվող սուբվենցիաների առանձնացված հաշվառում
Նկարագրություն/ ընթացք	<p>Համայնքին սուբվենցիան տրամադրվում է ՀՀ կառավարության որոշման հիման վրա և դրա հաշվառումն իրականացվում է այդ նպատակով բացված սուբվեն ծախսային և եկամտային հաշիվներով:</p> <p>Համայնքը կարող է օգտվել կառավարության որոշման հիման վրա իրեն հատկացված սուբվենցիայից պարտավորության իր մասնաբաժինը կատարելուց հետո: Համայնքը իր պարտավորության մասնաբաժինը կատարած լինելը հիմնավորող փաստաթղթերը բեռնում է ՀՀՀՀ մոդուլի Պայմանագրեր ենթամոդուլում առկա համապատասխան պայմանագրի ներդիրում և համակարգում ձևավորում է վճարման հայտ, որն ուղարկվում է Գանձապետարան:</p> <p>ԳՎ լիազորված աշխատակիցը ուսումնասիրում է վճարման հայտը և հիմնավորող փաստաթղթերը: Անհամապատասխանությունների</p>

	առկայության դեպքում վճարման հայտը մերժվում է՝ ուղարկելով սխալի վերաբերյալ հաղորդագրություն համայնքին ՀՀՀՀ մոդուլում: Թերությունների բացակայության դեպքում գործարքը հաստատվում է և համակարգային ստուգումներից հետո գումարը կրեդիտավորվում է համայնքի սուբվեն ծախսային հաշվին:
Հղում առկա գործընթացին	ԳՁ-ՀՊ14- Համայնքների ՀՀ պետական բյուջեից տրամադրվող սուբվենցիաների առանձնացված հաշվառում
Տիրույթ	ՀՀՀՀ մոդուլ, Գանձապետարան մոդուլ
Դերակատարներ	Համայնք, ԳՎ աշխատակից
Մուտքային տվյալներ	Հ 2.1, Հ 13
Ելքային տվյալներ	ԳՁ 2.2

3.4 ԲՄԿ-ների կողմից վճարումների կատարում




Նպատակ	ԲՄԿ-ների կողմից ստանձնած պարտավորությունների գծով մատակարարներին, աշխատակիցներին վճարումների կատարում
Նկարագրություն/ ընթացք	Ֆինանսավորման հատկացումից հետո ԲՄԿ լիազորված աշխատակիցը վճարումներ կատարելու համար ՀՀՀՀ մոդուլում կձևավորի վճարման հանձնարարականներ, որոնց հաստատման/գրանցման ժամանակ համակարգը կիրականացնի հսկում՝ ըստ նախահաշիվների, վճարման ժամանակացույցի, առկայության դեպքում՝ պայմանագրի տվյալների: Միայնի առկայության դեպքում համակարգը չի գրանցի վճարման հանձնարարականը՝ ցուցադրելով սխալի հաղորդագրություն: Միայնի բացակայության դեպքում վճարման հանձնարարականը կգրանցվի համակարգում և ինքնաշխատ կուղարկվի կատարման Գանձապետարան մոդուլ:

	Գանձապետարան մոդուլում կիրականացվի տվյալների ինքնաշխատ ստուգում և սխալների առկայության դեպքում գործարքը կմերժվի՝ ուղարկելով սխալի հաղորդագրություն ԲՄԿ-ին ՀՀՀՀ մոդուլում: Մխալների բացակայության դեպքում գործարքը կգրանցվի և կկատարվի: Համակարգը կատարված գործարքի վերաբերյալ տվյալները կփոխանցի ՀՀՀՀ մոդուլին:
Հղում առկա գործընթացին	ԳՁ-ՊԲ7 - ԾԻԳ-երից վճարային փաստաթղթերի ընդունում, ստուգում, վճարում ԳՁ-ՀՊ4 -վճարային փաստաթղթերի ընդունում, ստուգում, վճարում
Տիրույթ	ՀՀՀՀ մոդուլ, Գանձապետարան մոդուլ, ԿԲ
Դերակատարներ	ԲՄԿ աշխատակից
Մուտքային տվյալներ	Հ 2.2, Հ13
Ելքային տվյալներ	ԳՁ 2.2-2.3, ԳՁ 5

3.5 Հարկերի, տուրքերի և այլ վճարների վերադարձ


3.5.1. Պետական տուրքի, որոշ հարկատեսակների, գումարների ապահովման գումարների վերադարձ



Նպատակ	Իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից վճարված տուրքերի, հարկերի որոշ տեսակների վերադարձ
Նկարագրություն/ ընթացք	ՏՆ-ը իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից վճարված հարկերի, տուրքերի գումարների վերադարձ/փոխհատուցում իրականացնում է անձի կամ գանձող լիազոր մարմնի դիմումի հիման վրա՝ անհրաժեշտ փաստաթղթերի և իրավական հիմքերի առկայության դեպքում:

	<p>ԳՎ ուսումնասիրում է ստացված դիմումը և կից նյութերը: ԳՎ աշխատակիցը իրականացնում է մի շարք համակարգային ստուգումներ, մասնավոր դեպքերում ստուգվում է գանձապետական հաշվին գումարի մուտքագրված լինելու փաստ, գումարի նախկինում վերադարձման փաստ, գնումների ապահովումների վերադարձի դեպքում՝ պայմանագրի կատարված լինելու հիմքերը: Ներկայացված տվյալներում անճշտությունների, անհամապատասխանությունների կամ վիճելի հարցերի դեպքում ԳՎ աշխատակիցը գրությամբ տեղեկացնում է դիմումատուին այդ մասին՝ առաջարկելով շտկել անհամապատասխանությունները:</p> <p>Անհամապատասխանությունների բացակայության դեպքում ԳՎ աշխատակիցը համակարգում ձևավորում է էլեկտրոնային փոխանցում՝ ապահովելով անհրաժեշտ գումարի առկայությունը դեբետային հաշվին և հաստատում է գործարքը: Համակարգային ստուգումներ անցնելուց հետո գործարքը կատարվում է: Կատարված գործարքի մասով տվյալները փոխանցվում են ՀՀՀՀ մոդուլին:</p>
<p>Հղում առկա գործընթացին</p>	<p>ԳՁ-ՊԲ10 Պետական տուրքի վերադարձ</p> <p>ԳՁ-ՊԲ12 Դրոշմանիշային վճարի, շահաբաժնի և ակցիզային հարկի վերադարձ</p> <p>ԳՁ-ՊԲ16 Օտարերկրյա քաղաքացիներին ԱԱՀ-ի գումարների վերադարձ</p> <p>ԳՁ-ՊԲ22 Եկամտային հարկի վերադարձ ուսանողներին</p> <p>ԳՁ-ՊԲ23 Գնումների օրենսդրությամբ ապահովումների գումարների վերադարձ</p>
<p>Տիրույթ</p>	<p>Դիմող իրավաբանական/ֆիզիկական անձ (մասնավոր դեպքերում՝ ՊԵԿ, ԲՄԿ), Գանձապետարան մոդուլ, ԿԲ, ՀՀՀՀ մոդուլ</p>
<p>Դերակատարներ</p>	<p>ԳՎ աշխատակից</p>
<p>Մուտքային տվյալներ</p>	<p>-</p>
<p>Ելքային տվյալներ</p>	<p>ԳՁ5, ԳՁ 2.2</p>


3.5.2. Հարկերի վերադարձ միասնական հաշվից



Նպատակ	Հարկատուներին փոխհատուցման ենթակա հարկերի վերադարձ միասնական հաշվից
Նկարագրություն/ ընթացք	<p>Հարկերի միասնական հաշվից վերադարձի ձևակերպումը պետք է կատարվի վեբ ծառայության համակարգի միջոցով, որը կհամակցի ՊԵԿ-ի SS համակարգը ՀՀՀՀ մոդուլի հետ:</p> <p>Հարկի վերադարձի վճարման հանձնարարականը կձևավորվի ինքնաշխատ ՀՀՀՀ մոդուլում՝ ՊԵԿ-ի համակարգում առկա տվյալների հիման վրա և ՊԵԿ-ի լիազորված աշխատակցի հաստատմամբ կուղարկվի կատարման Գանձապետարան մոդուլ:</p> <p>Գանձապետարան մոդուլում կիրականացվի վճարման հանձնարարականի տվյալների ստուգում՝ ըստ ՀՎՀՀ-ների ենթահաշիվների տվյալների: Եթե ենթահաշվի մնացորդը բավարար չէ, ապա համակարգը կմերժի վճարման հանձնարարականի կատարումը՝ ուղարկելով սխալի հաղորդագրություն ՀՀՀՀ մոդուլին: Եթե մնացորդը բավարար է, համակարգը կստուգի ըստ վճարման շեմի արդյոք վճարումը ենթակա է ինքնաշխատ կատարման: Հաստատված շեմը չգերազանցելու</p>


	<p>դեպքում վճարումը կկատարվի ինքնաշխատ, մինչդեռ սահմանված շեմը գերազանցելու դեպքում՝ վճարումը կտեղափոխվի համակարգի հսկման հերթ և կհաստատվի ԳՎ լիազորված աշխատակցի կողմից սահմանված հավելյալ հսկումները կատարելուց հետո:</p> <p>Կատարված գործարքների վերաբերյալ տվյալները կուղարկվեն ՀՀՀՀ մոդուլին:</p>
Հղում առկա գործընթացին	ԳՁ-ՊԲ11 Հարկերի վերադարձ միասնական հաշվից
Տիրույթ	ՀՀՀՀ մոդուլ, Գանձապետարան մոդուլ, ԿԲ
Դերակատարներ	ՊԵԿ աշխատակից, ԳՎ աշխատակից
Մուտքային տվյալներ	Հ 2.2
Ելքային տվյալներ	ԳՁ5, ԳՁ 2.2

3.5.3 Եկամտային հարկի վերադարձ հիպոթեքային վարկի սպասարկման շրջանակներում



Նպատակ	Հիպոթեքային վարկի սպասարկման համար վճարված գումարների չափով ֆիզիկական անձանց կողմից վճարված եկամտային հարկի գումարների փոխհատուցում
Նկարագրություն/ ընթացք	<p>Հիպոթեքային վարկի սպասարկման համար վճարված գումարների չափով ֆիզիկական անձանց կողմից վճարված եկամտային հարկի գումարների փոխհատուցման վճարման հանձնարարականները կձևավորվեն ՀՀՀՀ մոդուլում ինքնաշխատ՝ ՊԵԿ-ի կողմից վարվող տեղեկատվական շտեմարաններում առկա տվյալների հիման վրա:</p> <p>Ձևավորված վճարման հանձնարարականները հաստատվելուց հետո կուղարկվեն կատարման Գանձապետարան մոդուլ, որտեղ ինքնաշխատ կկատարվի ընդհանուր ռեսուրսների հաշվից դեբետագրվող հաշվին անհրաժեշտ գումարի տեղափոխման գործարքը, որից հետո էլեկտրոնային փոխանցումը ինքնաշխատ կկատարվի:</p> <p>Կատարված գործարքների վերաբերյալ տվյալները կուղարկվեն ՀՀՀՀ մոդուլին:</p>
Հղում առկա գործընթացին	ԳՁ-ՊԲ22 Եկամտային հարկի վերադարձ -Եկամտային հարկի վերադարձ հիպոտեքային վարկի սպասարկման շրջանակներում
Տիրույթ	ՀՀՀՀ մոդուլ, Գանձապետարան մոդուլ, ԿԲ
Դերակատարներ	ՊԵԿ աշխատակից, ԳՎ աշխատակից
Մուտքային տվյալներ	Հ 2.2
Ելքային տվյալներ	ԳՁ5, ԳՁ 2.2


3.6 Էլեկտրոնային վճարումների հավաքագրում (e-payments)



Նպատակ	Ֆիզիկական անձանց կողմից պետական էլեկտրոնային վճարումների համակարգի միջոցով կատարված վճարումների հավաքագրում և մուտքագրում գանձապետական հաշիվներին
Նկարագրություն/ ընթացք	Պետական վճարումների էլեկտրոնային (epayments) համակարգի միջոցով ՀՀ ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից կատարվող պետական տուրքի, տեղական տուրքի, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող ծառայությունների համար գանձվող վճարների կամ վարչական տուգանքների վճարումները ինքնաշխատ կմուտքագրվեն \$Ն գանձապետական տարանցիկ հաշվին, որտեղից էլ ինքնաշխատ կբաշխվեն ըստ գանձող պետական մարմինների գանձապետական հաշիվների: Տվյալ ֆունկցիոնալությունը կապահովվի Գանձապետարան մոդուլի և պետական վճարումների էլ. համակարգի համակցման միջոցով:

	Գանձապետական հաշիվներին մուտքագրված գումարների վերաբերյալ տվյալները կուղարկվեն ՀՀՀՀ մոդուլին:
Հղում առկա գործընթացին	ԳԶ-ՊԲ18 Պետական վճարումների էլեկտրոնային համակարգի միջոցով վճարումներ
Տիրույթ	Վճարող, e-payments համակարգ, Գանձապետարան մոդուլ, ՀՀՀՀ մոդուլ
Դերակատարներ	-
Մուտքային տվյալներ	ԷՎ 1
Ելքային տվյալներ	ԳԶ 2.2


3.7 ՀԴՄ/Տերմինալ սարքերի միջոցով վճարումների հավաքագրում



Նպատակ	ՊՈԱԿ-ների կողմից մատուցված ծառայությունների դիմաց ՀԴՄ սարքերի կամ POS տերմինալներով վճարված գումարների մուտքագրում գանձապետական հաշիվներին
--------	--

Նկարագրություն/ ընթացք	<p>ՊՈԱԿ-ների կողմից մատուցված ծառայությունների դիմաց ՀԴՄ սարքերի կամ POS տերմինալներով վճարված գումարների մուտքագրումը գանձապետական հաշիվներին կիրազործվի առևտրային բանկի և ԿԲ-ի միջոցով:</p> <p>Հավաքագրված գումարը կմուտքագրվի գանձապետական տարանցիկ հաշվին, որից հետո համակարգը կուղարկի հարցում ՊԵԿ-ի համակարգին ստուգելու համար տվյալների ճշտությունը: ՊԵԿ-ի համակարգից դրական պատասխան ստանալու դեպքում գումարը կմուտքագրվի համապատասխան պետական մարմնի գանձապետական հաշվին, մինչդեռ բացասական պատասխանի դեպքում՝ գումարը կմնա միջանկյալ հաշվին մինչև հետագա պարզաբանումների կատարումը:</p> <p>Մուտքագրված գումարների վերաբերյալ տվյալները կուղարկվեն ՀՀՀՀ մոդուլ:</p>
Հղում առկա գործընթացին	ԳԶ-ՊԲ17 ՊՈԱԿ-ների գանձապետական հաշիվներին ՀԴՄ սարքերի միջոցով գանձումների գումարների մուտքագրում
Տիրույթ	ԿԲ, Գանձապետարան մոդուլ, ՊԵԿ, ՀՀՀՀ մոդուլ
Դերակատարներ	
Մուտքային տվյալներ	ԿԲ1, ՊԵԿ1
Ելքային տվյալներ	ԳԶ3, ԳԶ 2.2


3.8 ԵԱՏՄ անդամ պետությունների միջև մաքսատուրքերի և հակազնագցման տուրքերի բաշխում



Նպատակ	ԵԱՏՄ անդամ պետությունների կողմից ներմուծման մաքսատուրքերի (ինչպես նաև հակազնագցման տուրքերի) գումարների հաշվեգրում, բաշխում և փոխանցում անդամ պետությունների բյուջեներ
Նկարագրություն/ ընթացք	<p>Ներմուծման մաքսատուրքի գումարները, ինչպես նաև հակազնագցման տուրքերը հավաքագրվում են այդ նպատակով բացված գանձապետական հաշիվներին և յուրաքանչյուր աշխատանքային օրվա դրությամբ կատարվում է հավաքագրված մաքսատուրքի գումարների և հակազնագցման տուրքերի բաշխում ԵԱՏՄ անդամ պետությունների միջև տոկոսային համամասնությամբ՝ վերադարձի ենթակա գումարի սառեցումից հետո, որից հետո գումարը փոխանցվում է յուրաքանչյուր անդամ երկրի համար ԿԲ-ում բացված հաշիվներին: Փոխհաշվարկների կատարումից հետո ԵԱՏՄ անդամ երկիրը փոխանցում է մյուս երկրին դրական տարբերությունը:</p> <p>Համակարգը ինքնաշխատ կձևավորի հաշվետվություն մաքսատուրքի և հակազնագցման տուրքերի մասով (ներմուծված մաքսատուրքի գումարների, հաշվանցված և վերադարձված գումարների, անդամ պետությունների միջև բաշխման ենթակա գումարների, այլ անդամ պետությունների արտարժույթային հաշիվներին բաշխված գումարների և այլն.):</p> <p>Գործընթացն ամբողջությամբ ներկայացված է Փուլ 2.1-ի «Գանձապետարան» բաժնում: ԿՖԿՏՀ ներդրման շրջանակներում գործընթացը ենթակա չէ փոփոխման, բացառությամբ ՀՀՀՀ մոդուլին տվյալների փոխանցման փաստի:</p>

Հղում առկա գործընթացին	ԳՁ-ՊԲ20- ԵԱՏՄ անդամ պետությունների կողմից ներմուծման մաքսատուրքերի (ինչպես նաև հակազնագցման տուրքերի) գումարների հաշվեգրում, բաշխում և փոխանցում անդամ պետությունների բյուջեներ
Տիրույթ	ԿԲ, Գանձապետարան մոդուլ, ՀՀՀՀ մոդուլ
Դերակատարներ	
Մուտքային տվյալներ	-
Ելքային տվյալներ	ԳՁ5, ԳՁ 2.2, ԳՁ 2.4


3.9 Գործառնական օրվա բացում և փակում



Նպատակ	Գործառնական օրվա ամփոփում, հաշիվների գրոյացում
Նկարագրություն/ ընթացք	Գործառնական օրվա փակման գործընթացը տեղի է ունենում յուրաքանչյուր աշխատանքային օրվա սկզբին, որի ընթացքում ստուգվում և ամփոփվում են նախորդ աշխատանքային օրվա դրույթամբ կատարված բոլոր գործարքները, գրոյանում են եկամտային հաշիվները:


	Գործընթացն ամբողջությամբ ներկայացված է Փուլ 2.1-ի «Գանձապետարան» բաժնում: ԿՖԿՏՀ ներդրման շրջանակներում գործընթացը ենթակա չէ փոփոխման:
Հղում առկա գործընթացին	ԳՁ-ՊԲ13 Գործառնական օրվա բացում և փակում
Տիրույթ	Գանձապետարան մոդուլ, ԿԲ
Դերակատարներ	
Մուտքային տվյալներ	ԿԲ 1
Ելքային տվյալներ	-

3.10 Ծախսերի և եկամուտների վերաձևակերպումներ



Նպատակ	Ծախսերի և եկամուտների վերաձևակերպումներ
Նկարագրություն/ ընթացք	Ծախսերի և/կամ եկամուտների վերաձևակերպում կատարելու անհրաժեշտության դեպքում մարմինը ՀՀՀՀ մոդուլում կձևավորի վերաձևակերպման հայտ, որը լիազորված աշխատակցի հաստատմամբ կուղարկվի ԳՎ կատարման: Անհամապատասխանությունների առկայության դեպքում ԳՎ-ը պատճառաբանված հիմնավորմամբ կմերժի հայտը: Անհամապատասխանությունների բացակայության դեպքում ԳՎ-ը կհաստատի գործարքը, որից հետո հաստատված հայտի տվյալները կուղարկվեն ՀՀՀՀ մոդուլ և տեղի կունենա տվյալների համաժամանակեցում:
Հղում առկա գործընթացին	ԳՁ-ՀՊ9 - Պետական հ. բյուջեներից Եկամուտների և ծախսերի վերաձևակերպում և վերադարձ ԳՁ-ՀՊ10 - ՊՈԱԿ-ների բյուջեներից Եկամուտների և ծախսերի վերաձևակերպում և վերադարձ ԳՁ-ՀՊ11 - Համայնքների բյուջեներից Եկամուտների և ծախսերի վերաձևակերպում և վերադարձ
Տիրույթ	Գանձապետարան մոդուլ, ՀՀՀՀ մոդուլ
Դերակատարներ	ԳՎ աշխատակից
Մուտքային տվյալներ	Հ 2.3
Ելքային տվյալներ	ԳՁ 2


3.11 Ֆինանսական հոսքերի կառավարում



Նպատակ	Ֆինանսական միջոցների արդյունավետ կառավարում
Նկարագրություն/ ընթացք	<p>ԲՍԿ-ները բյուջետավորման մոդուլում կներկայացնեն կանխատեսվող ծախսերի ֆինանսավորման ժամանակացույց՝ շաբաթական կտրվածքով (հնարավորության դեպքում՝ օրական): ԲՍԿ-ին հատկացվող ֆինանսավորման չափը չի կարող գերազանցել ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված ծախսը:</p> <p>ԾՖՎ-ը, հիմք ընդունելով ընդհանուր ռեսուրսների հաշվի մնացորդը, ֆինանսավորման ժամանակացույցը, ինչպես նաև անալիտիկ-հաշվետվողական մոդուլից հարցվող այլ անհրաժեշտ տվյալներ, կկարողանա առավել արդյունավետ կառավարել դրամական միջոցները և համակարգի օգնությամբ հաշվարկել ավանդադրվող գումարի առավել արդյունավետ ժամանակահատվածը և գումարը: ԾՖՎ կձևավորի ավանդադրման հայտ՝ ԿԲ ուղարկելու համար, տվյալները կփոխանցվեն նաև ՀՀՀՀ մոդուլին:</p>
Հղում առկա գործընթացին	ԳԶ-ԾՖՅ Մասնակցություն ֆինանսական հոսքերի կառավարման և ծրագրավորման շրջանակներում պետական բյուջեի կատարման

	ընթացքին, ծախսային ծրագրերի ցուցանիշների կատարման վերաբերյալ կանխատեսումների ներկայացում
Տիրույթ	Բյուջետավորման մոդուլ, Գանձապետարանի մոդուլ, ԿԲ, ՀՀՀՀ մոդուլ
Դերակատարներ	ԲՍԿ, ԾՖՎ
Մուտքային տվյալներ	Բ1, Բ4
Ելքային տվյալներ	ԳՁ5, ԳՁ 2.2


3.12 Բանկային քարտերով և կանխիկ եղանակով ծախսերի իրականացում



Նպատակ	Պետական հիմնարկներին օրենքով սահմանված դեպքերում բանկային վճարային քարտերով և/կամ կանխիկ եղանակով ծախսեր կատարելու հնարավորության ապահովում
Նկարագրություն/ ընթացք	ԲՍԿ-ները իրենց կողմից առաջարկվող կանխիկ ձևով կատարվող ծախսերի և բանկային վճարային քարտերով շրջանառվող միջոցների չափաքանակների նախագծերը ներկայացնում են ՖՆ՝ բյուջետավորման մոդուլում ձևավորելով հայտ: Բանկային քարտով և/կամ կանխիկ

	<p>եղանակով չափաքանակի հատկացման հայտը ուսումնասիրվում է ՖՆ ԾՖՎ կողմից, անհամապատասխանությունների առկայության դեպքում հայտը վերադարձվում է ԲՄԿ-ին խմբագրման, այլապես հայտը ստանում է միջանկյալ գրանցում՝ մինչև համապատասխան կառավարության որոշման կայացումը:</p> <p>Կառավարության որոշման հիման վրա ՖՆ ԳՎ աշխատակիցը հաստատում է հայտերը, որոնց համաձայն ԲՄԿ-ին հատկացվում են որոշմամբ սահմանված չափաքանակները: Գրանցված տվյալները փոխանցվում են Գանձապետարան մոդուլին:</p>
<p>Հղում առկա գործընթացին</p>	<p>ԳՁ-ՀՊ5 Կանխիկ ձևով կատարվող ծախսերի չափաքանակների հաշվառում:</p> <p>ԳՁ-ՀՊ6 Բանկային վճարային քարտերով շրջանառվող միջոցների չափաքանակների հաշվառում</p> <p>ԳՁ-ԾՖ6 Պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների շրջանակում իրականացվող գործընթացի կարգավորման նպատակով՝ իրավական ակտերի նախագծերի պատրաստում, ներկայացված նախագծերի վերաբերյալ կարծիքի ներկայացում, բյուջեների կատարման ընթացակարգերի կատարելագործման ուղղությամբ առաջարկությունների մշակում և ներկայացում</p>
<p>Տիրույթ</p>	<p>Բյուջետավորման մոդուլ, Գանձապետարան մոդուլ</p>
<p>Դերակատարներ</p>	<p>ԲՄԿ, ՖՆ ԳՎ, ԾՖՎ</p>
<p>Մուտքային տվյալներ</p>	<p>Բ1</p>
<p>Ելքային տվյալներ</p>	<p>-</p>

3.13 ԴԱՀԿ որոշումների հիման վրա գանձապետական հաշիվների արգելադրում և գումարների բռնագանձում



Նպատակ	ԴԱՀԿ որոշման և կատարողական թերթի հիման վրա գանձապետարան հաշիվների վրա արգելանքի և/կամ բռնագանձման տարածում
Նկարագրություն/ ընթացք	<p>Պետական հիմնարկի հաշվի վրա արգելադրում և/կամ բռնագանձում կատարելու որոշման առկայության դեպքում Հարկադիր կատարումն ապահովով ծառայությունը էլեկտրոնային հարթակի միջոցով կուղարկի էլ. հարցում Գանձապետարանի մոդուլին՝ տվյալ պետական հիմնարկի համար գանձապետարանում վարվող հաշիվների վերաբերյալ անհրաժեշտ տվյալները ստանալու համար: ԳՎ աշխատակիցը կստանա հարցումը Գանձապետարանի մոդուլի համապատասխան միջերեսում և համակարգի միջոցով կտրամադրի անհրաժեշտ տվյալները ԴԱՀԿ-ին:</p> <p>ԴԱՀԿ-ն համակարգով կուղարկի հարցում տվյալ հաշվի վրա արգելանք/գումարի բռնագանձում կիրառելու վերաբերյալ: Եթե հաշվի մնացորդը բավարար է ամբողջ գումարի չափով բռնագանձում կիրառելու համար, ապա Գանձապետարանի համակարգը բռնագանձման ենթակա գումարի չափով ինքնաշխատ կփոխանցի գումարը ԴԱՀԿ հաշվին՝ ուղարկելով կատարման ծանուցում ԴԱՀԿ համակարգին և ՀՀՀՀ մոդուլին: Եթե հաշվի մնացորդը բավարար չէ, ապա հաշվի վրա կկիրառվի արգելադրում տվյալ գումարի չափով և հաշվին գումարի մուտքագրման պահին համակարգը ինքնաշխատ կգանձի մնացորդային</p>

	գումարը՝ ուղարկելով կատարման ծանուցում ԴԱՀԿ համակարգին և ՀՀՀՀ մոդուլին:
Հղում առկա գործընթացին	ԳՁ-ՊԲ14 Գումարների արգելադրում, արգելադրված գումարների փոխանցում
Տիրույթ	ԴԱՀԿ, Գանձապետարան
Դերակատարներ	ԳՎ աշխատակից
Մուտքային տվյալներ	-
Ելքային տվյալներ	ԳՁ 9, ԳՁ 2.2